Հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի« Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ աշխարհագրություն (10 դասաժամ),ֆիզկուլտուրա (8 դասաժամ), ԹԳՀԳ(4 դասաժամ), ինֆորմատիկա (3 դասաժամ), հ. լեզու(3 դասաժամ), գրականություն (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. <<<Հանրության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 5)
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 13 -ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 17-ին՝ ժամը 13:00-ին,Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Շղարշիկ, 5 –րդ փողոց, շենք 9:
Տեղեկությունների համար զանգահարել 098 86 41 56 հեռախոսահամարով: